Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 224 - Ա որոշման

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ N 2 ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի ՄԱՄՆԱՇԵՆՔԵՐԻ ՄԱՄՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է վերանորոգել «Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի դահլիճը, ճաշարանը, լվացքատունը և ենջարանային մասնաշենքի 2-րդ հարկը, որի արդյունքում կստեղծվեն հարմարավետ պայմաններ կրթահամալիրի 190 սաների ուսուցումը կազմակերպելու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայ Օգնության Ֆոնդ, Նյու Յորք, ԱՄՆ
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան 0010, Խորենացու փող. 22, ՀՎՀՀ՝ 02517115
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ք. Երևան, Ռաֆֆու փողոց, թիվ 113 շենք Բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 238,308. 25 (երկու հարյուր երեսունութ հազար երեք հարյուր ութ դոլար քսանհինգ ցենտ) ԱՄՆ դոլարին համարժեք դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբ՝ մարտի 27, 2021 թ. Ավարտ՝ հոկտեմբերի 30, 2021 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել կրթահամալիրի դահլիճը, ճաշարանը, լվացքատունը և ենջարանային մասնաշենքի 2-րդ հարկը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 238,308. 25 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև 2021 թվականի հոկտեմբերի 30-ը:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 238,308. 25 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով, պայմանագիր կնքված 22.02.2021 թ. Հայ օգնության ֆոնդի (ՀՀ, ք. Երևան 0010, Խորեացի 22, ՀՎՀՀ՝ 02517115) և «Կանակա» ԲԲԸ (ՀՀ, ք. Վանաձոր 2022, Նժդեհի փողոց 4, ՀՎՀՀ՝ 06901369) միջև:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցելու է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

17.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ